



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ ԸԻԴ N 0288/05/11թ.
Նախագահող դատավոր՝ Հ.Գրիգորյան
Դատավորներ՝ Լ.Ավանեսյան
Ն.Գրիգորյան

Վարչական գործ ԸԻԴ N 0288/05/11թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

2012թ. նոյեմբերի 2-ին

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր
դատավորներ՝

Ա.Հայրապետյանի
Գ.Արզումանյանի
Գ.Գրիգորյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Անահիտ Սամվելի Սարգսյանի ընդդեմ ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման և Սամվել Վլադիմիրի Մուսայելյանի՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-64 մատյանի 118215 համարի տակ կատարված գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին վարչական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2012թ. սեպտեմբերի 4-ի որոշման դեմ պատասխանող Սամվել Վլադիմիրի Մուսայելյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

2011 թվականի դեկտեմբերի 23-ին Անահիտ Սամվելի Սարգսյանը հայցադիմում է ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /այսուհետ՝ նաև Դատարան/ ընդդեմ ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման և Սամվել

Վլադիմիրի Մուսայեյանի՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-64 մատյանի 118215 համարի տակ կատարված գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի 2012 թվականի մայիսի 15-ի վճռով հայցը մերժվել է:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2012թ. սեպտեմբերի 4-ի որոշմամբ նշված վճռի դեմ բերված հայցվոր Անահիտ Սամվելի Սարգսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել, վճիռն ամբողջությամբ բեկանվել և գործն ուղարկվել է նույն դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության:

Նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել պատասխանող Սամվել Վլադիմիրի Մուսայեյանը:

Գերագույն դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է քննության:

Վճռաբեկ բողոքին պատասխան է ներկայացրել հայցվոր Ա.Սարգսյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Ըստ վճռաբեկ բողոքի՝ Վերաքննիչ դատարանը կիրառել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, որը չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով միայն հայցվոր Ա.Սարգսյանի վերաքննիչ բողոքի փաստարկը, եզրահանգել է, որ գործում բացակայում են դատական նիստի ժամանակի ու վայրի մասին հայցվոր Ա.Սարգսյանին պատշաճ ձևով ծանուցելու մասին ապացույցները և Դատարանի վճիռը բեկանել է դատավարական իրավունքի նորմի խախտման՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հիմքով: Մինչդեռ, գործում առկա են դատական նիստին հայցվորին ծանուցելու մասին ապացույցներ՝ հայցվոր Ա.Սարգսյանին հասցեագրված գրությունը, այդ գրությունը Ա.Սարգսյանին առաքելու և հաշվառելու մասին գրանցացուցակը, որոնք Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել են: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև հայցվորի հետ ունեցած հեռախոսագրույցի մասին դատավորի օգնականի՝ գործում առկա հեռախոսագիրը, որի ընթացքում հայցվոր Ա.Սարգսյանը հաստատել է, որ ստացել է ծանուցագիրը, սակայն դատական նիստին չի ներկայանալու, ինչով լրացուցիչ կերպով հաստատվում է այն հանգամանքը, որ հայցվորը դիտավորյալ կերպով չի ներկայացել դատական նիստին, ինչպես որ չի ներկայացել իր գործով կայացած բազմաթիվ դատական նիստերից և ոչ մեկին:

Բացի դրանից, Վերաքննիչ դատարանի որոշումը ստանալուց հետո պատասխանող կողմը «Արցախփոստ» ՓԲԸ-ին կատարել է հարցում ու վերստին հավաստիացել, որ դատական նիստի ժամանակի ու վայրի մասին հայցվորին ծանուցելու մասին գրությունը ստորագրությամբ հանձնվել է Ա.Սարգսյանին: Այսինքն՝ Դատարանի կողմից պատշաճ ծանուցման պահանջը չի խախտվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2012թ. սեպտեմբերի 4-ի որոշումը և օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մայիսի 15-ի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները.

Անհիմն են վճռաբեկ բողոքի փաստարկները: ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմի խախտում՝ գործը

քննել է հայցվոր Ա.Սարգսյանի բացակայությամբ, որը պատշաճ ձևով ծանուցված չի եղել դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

4. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ա/ 2012 թվականի մարտի 27-ի գրությամբ Դատարանը ծանուցել է դատական նիստին չներկայացած հայցվոր Ա.Սարգսյանին՝ դատական քննությունը հետաձգելու և դատական նիստը 2012 թվականի ապրիլի 27-ին նշանակելու մասին /գ.թ.70./.

բ/ 2012 թվականի ապրիլի 27-ի գրությամբ Դատարանը ծանուցել է դատական նիստին չներկայացած հայցվոր Ա.Սարգսյանին՝ դատական քննությունը հետաձգելու և դատական նիստը 2012 թվականի մայիսի 7-ին նշանակելու մասին /գ.թ.80/.

գ/ Վարչական գործում առկա է վերոնշված գրությունը փոստով հայցվոր Ա.Սարգսյանին առաքելու մասին ծանուցագիրը, որի վրա առկա է վերջինիս ստորագրությունը՝ 28.04.2012 թվականի ժամանակաթվով /գ.թ.34/.

դ/ Վարչական գործն ըստ էության քննվել է Դատարանի 07.05.2012 թվականի դատական նիստում՝ հայցվոր Ա.Սարգսյանի բացակայությամբ.

ե/ Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, որ գործում բացակայում են 07.05.2012 թվականի դատական նիստի ժամանակի ու վայրի մասին հայցվորին պատշաճ ձևով ծանուցելը հաստատող ապացույցները:

5.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.14-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկության կարգով գործի քննության ժամանակ Գերագույն դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Քննելով վճռաբեկ բողոքը նշված սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է մասնակիորեն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն՝ ծանուցագրով դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին տեղեկացվում են դատավարության մասնակիցները, վկաները, փորձագետները և թարգմանիչները:

Նույն օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ծանուցագրի հանձնումն իրականացվում է «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, իսկ 3-րդ մասի համաձայն՝ ծանուցագիրն ուղարկվում է այն հաշվով, որ դրանց հասցեատերերը դատական նիստին ներկայանալուց կամ դատավարական գործողությունների կատարմանը մասնակցելուց առնվազն 5 օր առաջ իրագեկվեն դատական նիստի կամ դատավարական գործողությունների կատարման ժամանակի և վայրի մասին:

Սույն վարչական գործի փաստերի համաձայն՝ 2012 թվականի մարտի 27-ի գրությամբ Դատարանը ծանուցել է դատական նիստին չներկայացած հայցվոր Ա.Սարգսյանին՝ դատական քննությունը հետաձգելու և դատական նիստը 2012 թվականի ապրիլի 27-ին նշանակելու մասին:

2012 թվականի ապրիլի 27-ի գրությամբ Դատարանը ծանուցել է դատական նիստին չներկայացած հայցվոր Ա.Սարգսյանին՝ դատական քննությունը հետաձգելու և դատական նիստը 2012 թվականի մայիսի 7-ին նշանակելու մասին:

Վարչական գործում առկա է վերոնշված գրությունը փոստով հայցվոր Ա.Սարգսյանին առաքելու մասին ծանուցագիրը, որի վրա առկա է Ա.Սարգսյանի ստորագրությունը՝ 28.04.2012 թվականի ժամանակաթվով /գ.թ.34/:

Վարչական գործն ըստ էության քննվել է Դատարանի 07.05.2012 թվականի դատական նիստում՝ հայցվոր Ա.Սարգսյանի բացակայությամբ:

Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով վերաքննիչ բողոքի պատճառաբանությունն այն մասին, որ Դատարանը գործը քննել է դատական նիստի մասին պատշաճ ձևով չճանուցված հայցվոր Ա.Սարգսյանի բացակայությամբ, Դատարանի վճիռը բեկանել ու գործը նոր քննության համար ուղարկել է նույն դատարան՝ դատավարական իրավունքի նորմի խախտման՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հիմքով և նյութական իրավունքի նորմերի խախտման մասին բողոք բերած անձի պատճառաբանություններին չի անդրադարձել: Մինչդեռ Դատարանը, ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան, 27.04.2012թ. հայցվոր Ա.Սարգսյանին պատշաճ ձևով տեղեկացրել է 07.05.2012թ. կայանալիք դատական նիստի ժամանակի և վայրի մասին, ինչը հաստատվում է գործում առկա ծանուցագրով, որի վրա առկա է Ա.Սարգսյանի ստորագրությունը՝ 28.04.2012 թվականի ժամանակաթվով:

Նման հանգամանքներում վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու ու վերաքննիչ բողոքի նյութաիրավական հիմքերի և հիմնավորումների սահմաններում գործը նույն դատարան քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18 հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պատասխանող Սամվել Վլադիմիրի Մուսայեյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2012թ. սեպտեմբերի 4-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:
2. Գործի նոր քննության արդյունքում անդրադառնալ դատական ծախսերի բաշխման հարցին:
3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

**Գ.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**